

Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

 ղոցենտ Խ. Ղազեյան

«13.06.2024թ.»

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

***Մարիամ Արայիկի Գրիգորյանի՝ «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրը ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման համարեքստում» թեմայով ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ***

**Մարիամ Արայիկի Գրիգորյանի** (այսուհետ՝ Հեղինակ) «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրը ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման համարեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստում (12.06.2024, արձանագրություն N 2), մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., ղոցենտ Թ. Շաքարյանի, ի.գ.դ., պրոֆեսորներ Գ.Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Հակոբյանի, ի.գ.թ. ղոցենտներ Ա.Եզեկյանի և Լ.Հակոբյանի, ի.գ.թ. Մ.Մկրտչյանի, նիստի քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի:

Ատենախոսության թեման նվիրված է ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում դրսևորվող մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների բացահայտմանը և ուսումնասիրությանը, ինչպես նաև ազգային-ազատագրական

պայքարի և ինքնիշխան պետություն ստեղծելու ճանապարհին ԽՍՀՄ-ի, նախկին Հարավսլավիայի փլուզման արդյունքում ձևավորված չճանաչված պետություններում, այդ թվում՝ Արցախի Հանրապետությունում մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության վերաբերյալ հրապարակված ուսումնասիրությունների, Հեղինակը փորձել է մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրն ուսումնասիրել հենց չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի համատեքստում: Հետազոտության մեջ կոնկրետ օրինակներով և փաստերով հիմնավորվել է, որ մարդու իրավունքների պաշտպանության առկա միջազգային գործիքակազմն ի զորու չէ երաշխավորելու ազգային-ազատագրական պայքարի փուլում գտնվող ժողովրդի կազմի մեջ մտնող առանձին վերցրած անհատի իրավունքները և ազատությունները:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ներկայացված աշխատանքը կազմված է առաջաբանից, 3 գլուխներից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են 6 պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

Առաջաբանում հիմնավորվում է թեմայի արդիականությունը և ատենախոսության աշխատանքի գիտական նորույթը, որոշակիացվում են վերջինիս մեթոդաբանական ու տեսական հիմունքները, նրա նպատակներն և խնդիրները, ձևակերպվում են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Ներածությունում հիմնավորվում են աշխատանքի տեսական և գործնական կարևորությունը: Ներածությունը տեղեկություններ է պարունակում նաև հետազոտության արդյունքների փորձարկման վերաբերյալ:

Առաջին գլուխը՝ «Ազգերի ինքնորոշման իրավունքի և դրա, որպես իրավական սկզբունքի ծագումը, զարգացումը բովանդակությունը» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը՝ «Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ծագումը և զարգացումը» վերտառությամբ, անդրադարձ է կատարվում ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ծագմանը և զարգացմանը՝ սկսած Հին Հունաստանի և Հին Հռոմի ժամանակներից մինչև մեր օրերը:

Երկրորդ պարագրաֆը՝ «Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման միջազգային իրավական սկզբունքի էությունը և բովանդակությունը» վերտառությամբ, անդրադառնում է ինքնորոշման իրավունքի՝ որպես միջազգային իրավունքի jus cogens սկզբունքի կայացմանը և վերջինիս էության բացահայտմանը:

Երկրորդ գլուխը՝ «Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը և մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հրամայականի անխախտելիությունը» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը՝ «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության ինստիտուտի էվոլուցիան» վերտառությամբ, մանրամասն անդրադառնում է այսօր աշխարհում գործող մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի ծագման և հետագա զարգացման հիմնահարցերին:

Երկրորդ պարագրաֆը՝ «Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացմանը խոչընդոտող ցանկացած գործողություն, որպես մարդու իրավունքների պաշտպանության դեմ ուղղված մարտահրավեր» վերտառությամբ, անդրադառնում է իրենց ինքնորոշման իրավունքն իրագործած և սեփական պետությունը ստեղծելու ցանկություն ունեցող ազգերի և ժողովուրդների ամենատարբեր մակարդակներում ի հայտ եկող իրավունքների բազում խախտումներին:

Երրորդ գլուխը՝ «Արցախի Հանրապետությունում անձի իրավունքների միջազգային իրավական ապահովման հիմնախնդիրները՝ ազգային-ազատագրական պայքարի և ինքնիշխան պետություն ստեղծելու ճանապարհին» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից:

«Միջազգային հանրային իրավունքը և ԱՀ բնակչության ազգային ազատագրական պայքարի իրավաչափության հարցը» վերտառությամբ առաջին պարագրաֆն անդրադառնում է այն հարցին, թե որքանով էր արցախահայության ազգային ազատագրական պայքարը համապատասխանում միջազգային իրավունքի իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

Երկրորդ պարագրաֆը՝ «Արցախի Հանրապետությունում անհատի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները և դրանց ապահովման հետ կապված հիմնախնդիրները» վերտառությամբ, նվիրված է արցախահայության այսօր գոյություն ունեցող խնդիրներին՝ կապված սեփական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները՝ եզրահանգումների տեսքով:

Աշխատանքը, հիմնականում, շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ ու խրթին մտքերից, լեզվական ու քերականական կանոնների շեղումներից, սակավաթիվ են նաև վրիպակները:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը:



Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող ՄԻԵԴ դատական ակտերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերն ու պրակտիկան, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումներին: Ատենախոսությունում բավարար չափով ներկայացված է նաև միջազգային պրակտիկայի ուսումնասիրության շրջանակներում իրավահամեմատական վերլուծություններ ինչն առավելապես հարստացրել է կատարված հետազոտությունը:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից հավուր պատշաճի օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ: Բացի այդ, ատենախոսությունում նկատվում է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների ու միջազգային պրակտիկայի վերաբերյալ:

Միաժամանակ, կարծում ենք, ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ**

1.1 Պաշտպանության դրվող 7-րդ և 8-րդ դրույթների բովանդակությունը և կատարված եզրահանգումներն ունեն առավելապես քաղաքագիտական ուղղվածություն:

1.2 Ատենախոսության գիտական արժեքն ավելի կբարձրանար, եթե Հեղինակը պատշաճ գիտական վերլուծության ենթարկեր ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի վերաբերելի որոշումները (մասնավորապես, *Նամիբիային առնչվող գործերով 1950 և 1969թթ., խորհրդարվական եզրակացությունները*) չճանաչված պետությունների բնակչության իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական ասպեկտների վերաբերյալ, ինչի համատեքստում քննարկման առարկա է դարձել նաև չճանաչված պետությունների իրավական ակտերի իրավաչափության հարցը:

1.3 Ատենախոսության մի շարք հատվածներում Հեղինակի կողմից օգտագործվում է «մետրոպոլիա» եզրույթը, ինչը, մեր կարծիքով, ժամանակակից միջազգային-իրավական պրակտիկային չի համապատասխանում և վերաբերելի է ապագադրութան գործընթացին:

## **2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ**

Անդրադառնալով հետազոտության առարկային և հաշվի առնելով, որ հետազոտության առարկան չափազանց կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և ընդհանուր առմամբ հայ ժողովրդի կենսական շահերի տեսանկյունից, կցանկանայինք պարզապես

ներկայացնել հետազոտության առարկայի վերաբերյալ մի քանի սկզբունքային նկատառումներ, որոնք կբարձրացնեն աշխատության ընդհանուր գիտական և պրակտիկ արժեքը, որոնք Հեղինակը նաև կարող է օգտագործել իր հետագա գիտական գործունեության ընթացքում: **Սույն նկատառումները վերաբերում են հատկապես ազգերի ինքնորոշման իրավունքի, մասնավորապես Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման՝ հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումներին:** Այսպես.

Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը արտացոլող հիմնական դրույթները ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում, «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տրամադրելու մասին» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1960թ. դեկտեմբերի 14-ի հռչակագրում, 1966թ. մարդու իրավունքների զույգ հռչակագրերում, «Միավորված ազգերի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում» (այսուհետ՝ Սկզբունքների հռչակագիր), որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1970թ. հոկտեմբերի 24-ի բանաձևով, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության 1975թ. Հելսինկյան եզրափակիչ ակտում: Ինչպես տեսնում ենք, ապագադրությամբ համատեքստում ինքնորոշման իրավունքի իրացումը՝ անկախ պետություն ստեղծելու ճանապարհով, լայնորեն ճանաչված է ինչպես միջազգային-իրավական փաստաթղթերում, այնպես էլ պետությունների պրակտիկայում: Թեև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վերը նշված բանաձևերը ինքնին չեն հանդիսանում միջազգային-իրավական ակտեր, այնուամենայնիվ, դրանք ճանաչված են որպես միջազգային սովորության իրավունքի բաղկացուցիչ մասեր և դրանց արտահայտում, հետևաբար, ըստ այդմ՝ պարտադիր են պետությունների համար:

Քանի որ ադրբեջանական դիրքորոշման առանցքային կետերից մեկը արցախյան հակամարտության միջազգային-իրավական ասպեկտների վերաբերյալ կայանում է նրանում, որ *միջազգային իրավունքը ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաչում է միայն ապագադրությամբ համապատասխան*, հետևաբար Արցախի դեպքում այն կիրառելի չէ, փորձենք վեր հանել պետությունների միջպետական պրակտիկային և համապատասխան դատական նախադեպերից դեպքեր, որոնք կարող են վկայակոչվել ԱրՀ ստեղծման իրավաչափությունը հիմնավորելու համար:

Նախ, անդրադառնանք ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի փոխհարաբերակցությանը: Մասնավորապես, տարածքային ամբողջականության սկզբունքը, այնպես ինչպես ամրագրված է վերը թվարկված միջազգային փաստաթղթերում, չի բացառում միջազգային իրավունքին համահունչ պետությունների սահմանների փոփոխությունները, այլ առնչվում է ուժ կամ ուժի



սպառնալիք չգործադրելու արգելքին մեկ այլ պետության տարածքային անձեռնմխելիության նկատմամբ: **Միակ դրույթը**, որը որոշակի առումով համակարգային ամբողջության մեջ է դիտարկում ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները, և մեկի իրացումը կախման մեջ դնում մյուսից, **հանդիսանում է Սկզբունքների հռչակագրի հետևյալ ձևակերպումը՝**

*«ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի ուժով ... բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության, որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնել իրենց տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացումը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգելու այդ իրավունքը...*

*...Անկախ և ինքնիշխան պետության ստեղծումը, անկախ պետությանը ազատորեն միանալը կամ նրա հետ միավորվելը կամ ժողովրդի կողմից ազատորեն ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի հաստատումը հանդիսանում են տվյալ ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրացման եղանակները...*

*... Վերը թվարկված կետերում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի գործողությունների խթանում կամ թույլատրում, որոնք կհանգեցնեն ինքնիշխան և անկախ պետությունների մասնատմանը կամ քաղաքական միասնության և տարածքային ամբողջականության լրիվ կամ մասնակի խախտմանը, եթե այդ պետությունները իրենց գործողություններում հենվում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքների հիման վրա, և, որպես հետևանք, ունեն կառավարություններ, որը ներկայացնում է տվյալ տարածքում ապրող ամբողջ ժողովրդին՝ առանց ռասայի, կրոնի կամ մաշկի գույնի հետ կապված խտրականության՝ ...»*

Վերը ընդգծված դրույթը միակ նորմն է, որը կախվածության մեջ է դնում ինքնորոշման իրավունքի իրացումը տվյալ պետության տարածքային ամբողջականությունից, պայմանով, որ տվյալ պետությունն ունի կառավարություն, որը ներկայացնում է տվյալ պետության սահմաններում գտնվող ամբողջ ժողովրդին: Այսինքն, եթե մենք այս դրույթը ենթարկենք *a contrario* մեկնաբանության, ապա կարող ենք պնդել, որ *ինքնորոշման իրավունքը չի կարող կախվածության մեջ դրվել այն պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքից, որոնք չեն գործում ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքների հիման վրա և, հետևաբար չունեն կառավարություն, որը կներկայացնի տվյալ պետության ամբողջ ժողովրդին՝ առանց որևէ խտրականության:*

---

<sup>1</sup> Nothing in the foregoing paragraphs shall be construed as authorizing or encouraging any action which would dismember or impair, totally or in part, the territorial integrity or political unity of sovereign and independent States conducting themselves in compliance with the principle of equal rights and self-determination of peoples as described above and thus possessed of a government representing the whole people belonging to the territory without distinction as to race, creed or colour.

Վերջին տասնամյակներում միջազգային-իրավական պրակտիկայում լայնորեն քննարկվում է պաշտպանողական անջատման (*remedial secession*) գաղափարը, որի էությունը կայանում է էթնիկ խմբի կամ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը պետությունից անջատման միջոցով՝ որպես վերջին միջոց (*last resort*) ընդդեմ իր իսկ նկատմամբ կիրառված բռնությունների և մարդու հիմնարար իրավունքների համատարած խախտումների: Որպեսզի պարզենք միջազգային իրավունքում համապատասխան իրավունքի իրացումը թույլատրող սովորույթային նորմի բյուրեղացման (*crystallization*) առկայությունը, անհրաժեշտ է վերլուծել միջազգային հարաբերությունների պրակտիկային հայտնի նմանատիպ դեպքերը և պետությունների վերաբերմունքը դրանց նկատմամբ: Մասնավորապես, Բանգլադեշի և Կոսովոյի նախադեպերը վկայում են, որ

ա) երկու դեպքերում էլ ինքնորոշման իրավունքի իրացումը տեղի է ունեցել գաղութացման համատեքստից դուրս,

բ) երկու դեպքերում էլ ինքնորոշման իրավունքի իրացումը անջատման միջոցով հանդիսացել է տվյալ տարածքի բնակչության ինքնորոշման նկրտումների դեմ կիրառված բիրտ ուժի մարդու հիմնարար իրավունքների համակարգային խախտումների հետևանք;

գ) ճանաչման բավականին բարձր մակարդակը վկայում է պետությունների պրակտիկայում պաշտպանողական անջատման գաղափարի հետագա ամրապնդման մասին:

**Դատական նախադեպեր:** Ինքնորոշման իրավունքի իրացման սահմանների վերաբերյալ առկա են մի քանի դատական նախադեպեր, որոնցում արտահայտվել են հեղինակավոր իրավական դիրքորոշումներ՝ ինքնորոշման իրավունքի իրացումը դիտարկելով անմիջականորեն Սկզբունքների հռչակագրում առկա նորմի *a contrario* մեկնաբանության վրա: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

ա) ՄԱԿ-ի Միջազգային դատարանը անդրադարձել է ինքնորոշման իրավունքին հետևյալ գործերով՝ *Նամիբիային առնչվող գործերով 1950 և 1969թթ.*, *Արևմտյան Սահարայի իրավիճակի վերաբերյալ 1975թ. տրված խորհրդարանական եզրակացությամբ*, *Արևելյան Թիմորի վերաբերյալ Պորտուգալիան ընդդեմ Ավստրալիայի 1995թ. հունիսի 30-ի վճռով*, *Պաղեստինյան օկուպացված տարածքներում պատի կառուցման իրավաչափության վերաբերյալ 2004թ. հուլիսի 9-ին տրված խորհրդարանական եզրակացությամբ*: Եթե առաջին երեք գործերը վերաբերում են ապագաղութացման համատեքստում ինքնորոշման իրավունքի իրացմանը, ինչն ըստ էության լայնորեն ընդունվում է ամբողջ միջազգային հանրության կողմից, և կիրառելի չեն մեր դեպքում, ապա Պաղեստինի գործը մեր համար հետաքրքիր է նրանով, որ այդտեղ Միջազգային դատարանը քննության է առել «Պաղեստինի ժողովրդի»՝ որպես ինքնորոշման իրավունքի սուբյեկտի առկայության հարցը: Սույն հարցը կարևորվում է նրանով, որ միջազգային իրավունքը սահմանելով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման



իրավունքը, չի սահմանում, թե ինչն է հանդիսանում ժողովուրդ՝ որպես ինքնորոշման իրավունքի սուբյեկտ: Միջազգային դատարանը տվյալ գործով խուսափեց «ժողովուրդ» հասկացությունը ընդհանրական կերպով սահմանելուց, բայց ևս այնպես արձանագրեց, որ՝

«...Դատարանը նկատում է, որ «Պաղեստինի ժողովրդի» առկայության հարցը պարզելը այլևս արդիական չէ: Դա բազմիցս ճանաչվել է «Պաղեստինի ազատագրության կազմակերպության նախագահ Յասիր Արաֆատի և Իսրայելի վարչապետ Իցխակ Ռաբինի նամակներում, որտեղ նշվում է Պաղեստինի ազատագրության կազմակերպության որպես Պաղեստինի ժողովրդի ներկայացուցիչ լինելու մասին...»

Սույն ձևակերպումը ուշադրության է արժանի հատկապես նրանով, որ տարբեր միջազգային փաստաթղթերում, մասնավորապես ՄԱԿ-ի ԱԽ 1993թ. բանաձևերում խոսվում է «Լեռնային Ղարաբաղի հայերի» մասին (Armenians of Nagorno-Karabakh)՝ որպես առանձին հանրույթի: Ուշադրության է արժանի նաև Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների նամակները՝ ուղղակիորեն հասցեագրված ԼՂՀ իշխանություններին:

Կոսովոյի անկախության իրավաչափության հարցով 2010թ. տրված խորհրդարարական եզրակացության մեջ Միջազգային դատարանը խուսափեց ուղղակիորեն անդրադառնալ ինքնորոշման իրավունքի հարաբերակցությանը տարածքային ամբողջականության սկզբունքին, այլ ուղղակիորեն քննարկեց անկախության հռչակագրերի ընդունման համապատասխանությունը միջազգային իրավունքին:<sup>2</sup> Միջազգային դատարանը հստակորեն արձանագրեց, որ միջազգային իրավունքում չկա որևէ նորմ, որը կարգելի անկախության հռչակագրերի հրապարակումը:

բ) Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը անդրադարձել է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի իրացմանը պաշտպանողական անջատման միջոցով երկու գործերով (*Kevin Mgwanga Gunme et al v. Cameroon* (*Kevin Mgwanga Gunme et al v. Cameroon, African Commission on Human and Peoples' Rights, Communication No. 266/03 (2009), §199*) and in the *Katangese Peoples' Congress v. Zaire cases of the African Commission on Human and Peoples' Rights*): Սույն գործերով Հանձնաժողովը չի ճանաչել հայցող խմբերի ինքնորոշման իրավունքի առկայությունը՝ հենվելով Կամերունում և Չադում **մարդու իրավունքների խախտումները հավաստող կոնկրետ ապացույցների բացակայության վրա:**

գ) Թերևս **անջատման միջոցով ինքնորոշման իրավունքի իրացման՝ միջազգային իրավունքին համապատասխանության տեսանկյունից**

<sup>2</sup> Միջազգային դատարանին հասցեագրվել էր հետևյալ հարցը՝ *Is the unilateral declaration of independence by the Provisional Institutions of Self-Government of Kosovo in accordance with international law*



**ամենահեղինակավոր և վերաբերելի վճիռը** հանդիսանում է *Կանադայից Քվեբեկի անջատման իրավաչափության հարցով Կանադայի Գերագույն դատարանի 1998թ. որոշումը*: Սույն գործով Գերագույն դատարանին հասցեագրված երկրորդ հարցը ուղղակիորեն ձևակերպված էր հետևյալ կերպ՝

*Արդյոք միջազգային իրավունքում առկա է ինքնորոշման իրավունք, որը հնարավորություն կտա Քվեբեկի Ազգային ժողովին կամ կառավարությանը միակողմանիորեն իրականացնելու Կանադայից անջատումը:*

Գերագույն դատարանը, քննարկելով վերը նշված հարցը, նշեց, որ ինքնորոշման իրավունքի իրացման հետևյալ դեպքերն են իրավաչափ՝

- երբ որևէ ժողովուրդ կազմում է գաղութային կայսրության մաս,
- երբ որևէ ժողովուրդ ենթակա է օտարերկրյա հպատակության, գերիշխանության կամ շահագործման,
- երբ որևէ ժողովուրդի մերժվում է գոյություն ունեցող սահմաններում ինքնորոշման իրավունքի իրացման որևէ ողջամիտ տարբերակ:

Կանադայի գերագույն դատարանը, հղում կատարելով Սկզբունքների հռչակագրի վերոհիշյալ դրույթին, եզրակացրել է, որ Կանադան հանդիսանում է ինքնիշխան պետություն, որը գործում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա, և հետևաբար ունի կառավարություն, որը ներկայացնում է տվյալ պետության ամբողջ ժողովրդին առանց որևէ խտրականության: Մասնավորապես, Գերագույն Դատարանը հաշվի է առել, որ քվեբեկցիները մշտապես զբաղեցրել են առանցքային պաշտոններ Կանադայի կառավարությունում, ազատորեն իրականացրել են իրենց տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացումը:<sup>3</sup> Հետևաբար, Գերագույն դատարանը եզրակացրել է, որ ժամանակակից միջազգային իրավունքը չի թույլատրում Քվեբեկի միակողմանի անջատումը Կանադայից:

**Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման ամփոփ բնութագիրը:** Ինչպես հայտնի է, ադրբեջանական ամբողջ քարոզչամեքենան ուղղված է միջազգային հանրության աչքերում արցախյան հիմնախնդրի բուն էության խեղաթյուրմանը, վերջինս որպես Հայաստան-Ադրբեջան տարածքային վեճ ներկայացնելուն, ՀՀ-ն որպես օկուպանտ պետություն ճանաչելուն: Սույն պնդումների առնչությամբ կարելի է կատարել հետևյալ դիտարկումները:

---

<sup>3</sup> Տես որոշման 136-րդ կետը: The population of Quebec cannot plausibly be said to be denied access to government. Quebecers occupy prominent positions within the government of Canada. Residents of the province freely make political choices and pursue economic, social and cultural development within Quebec, across Canada, and throughout the world. The population of Quebec is equitably represented in legislative, executive and judicial institutions. In short, to reflect the phraseology of the international documents that address the right to self-determination of peoples, Canada is a "sovereign and independent state conducting itself in compliance with the principle of equal rights and self-determination of peoples and thus possessed of a government representing the whole people belonging to the territory without distinction".

Արցախյան հիմնախնդիրը որևէ պարագայում չի կարող դիտարկվել որպես տարածքային վեճ ՀՀ և ԱդՀ միջև, քանի որ ի սկզբանե այն սկսվել է Արցախի ժողովրդի արդար և իրավաչափ պահանջներից ՀԽՍՀ-ի հետ վերամիավորվելու նպատակով: Ի պատասխան կիրառված բիրտ ուժի և էթնիկ զտումների քաղաքականության՝ Արցախի ժողովուրդը 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց իր անկախությունը, որն ամրապնդվեց նույն թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեի արդյունքներով: **Վերջիվերջո, անհրաժեշտ է միջազգային հանրությանը և համանախագահող երկրներին հասցնել այն պնդումը, որ Արցախը երբևէ, որևէ պատմական ժամանակահատվածում չի եղել Ադրբեջանի՝ որպես անկախ պետության և միջազգային իրավունքի սուբյեկտի սահմաններում:** Ի պատասխան ադրբեջանական կողմից վկայակոչվող *uti possidetis* սկզբունքի<sup>4</sup>՝ կարող ենք որպես հակափաստարկ մատնանշել հենց նույն Կոստվոյի դեպքը, երբ անջատման իրավաչափությունը հիմնավորելիս *uti possidetis* սկզբունքի կիրառմանը ուշադրություն չդարձվեց: Այսինքն, այս սկզբունքի կիրառումը ընդհանրապես չի բացառում միջազգային իրավունքին համահունչ սահմանների փոփոխությունները և ինքնորոշման իրավունքի իրացումը:

**Վերոհիշյալ դիրքորոշումների կիրառելիությունը Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիմնավորման գործում:** Ամփոփելով վերը ասվածը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը և Ադրբեջանից առանձին պետության հիմնումը կարող ենք հիմնավորել հետևյալ փաստերով՝

ա) Ադրբեջանը չի կարող որևէ տարածքային հավակնություններ ունենալ Արցախի նկատմամբ, որովհետև Արցախը երբևէ չի եղել Ադրբեջանի՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի և ինքնիշխան պետության կազմում: Այս առումով, նույնիսկ Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելը չի կարող վկայակոչվել ադրբեջանցիների կողմից, որովհետև Ադրբեջանի Հանրապետությունը 1991թ. հոկտեմբերի 18-ի սահմանադրական ակտի համաձայն հանդիսանում է 1918-1920թ.. Ադրբեջանի դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը: Վերոհիշյալ ակտի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներում բառացիորեն ասվում է հետևյալը՝

1. *1920թ. ապրիլի 27-28-ին ՌԽՖՍՀ 11-րդ բանակի ներխուժումը Ադրբեջան, հանրապետության տարածքի անեքսիան, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության՝ միջազգային իրավունքի սուբյեկտի տապալումը հանդիսանում են Ռուսաստանի կողմից Ադրբեջանի օկուպացիա:*

2. *Ադրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է 1918թ. մայիս 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդը:*

<sup>4</sup> Վերջինս ապագադրությամբ գործընթացում տարածքային վեճերի լուծման համար կիրառվող սկզբունք է, որի համաձայն գաղութային կայսրության նախկին վարչական սահմանները դառնում են նոր ստեղծվող պետությունների միջպետական սահմաններ:



3. 1922թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ ստեղծման մասին պայմանագիրը Ադրբեջանին վերաբերող մասով անվավեր է ստորագրման պահից:

Նախկին ԽՍՀ Միության կազմի մեջ մտնող ինքնիշխան պետությունների հետ հարաբերությունները ենթակա են կարգավորման պայմանագրերի և համաձայնությունների հիման վրա:

Այս դրույթներից մենք կարող ենք կատարել շատ կարևոր եզրահանգում ու դա օգտագործել նաև քաղաքական հարթակներում՝ **ինչպես կարող է Ադրբեջանը իր փաստարկները Արցախի նկատմամբ հիմնավորել փարածքային ամբողջականության սկզբունքը վկայակոչելով, եթե հենց իր հիմնարար սահմանադրական ակտով անվավեր է ճանաչել իր նկատմամբ խորհրդային իշխանության բոլոր ակտերը: Հիշեցնենք, որ Արցախը Ադրբեջանին է փոխանցվել ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի՝ որևէ իրավական ուժ չունեցող որոշմամբ, ինչի անվավերությունը ըստ էության անուղղակիորեն ընդունում են նաև ադրբեջանցիները:**

բ) 1988թ. սկսված՝ իրենց պատմական հայրենիքում խաղաղ ապրելու մարդկանց ինքնաբուխ և բնական ձգտմանը ի պատասխան՝ հետևեց պետականորեն կազմակերպված ահաբեկման քաղաքականությունը Ադրբեջանի հայ ազգաբնակչության նկատմամբ, ինչի ակնառու վկայությունը հանդիսացան Սումգայիթի և Բաքվի կոտորածները, «Օղակ» գործողությունը, որի հետևանքով զոհվեցին տասնյակ խաղաղ մարդիկ, հարյուր հազարավորները բռնեցին գաղթի ճանապարհը: Տրամաբանական էր, որ ստեղծված պայմաններում Արցախի հայ բնակչությունը զենքը ձեռքին պետք է փորձեր պաշտպանել իր՝ ապրելու և իր հայրենիքում սեփական պետություն ունենալու իրավունքը: Արդյունքում 1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, որը ամրագրվեց նույն թվականի դեկտեմբերի 10-ին կայացած հանրաքվեի արդյունքներով: Հատկանշական է, որ ամբողջ գործընթացն իրականացվել է «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հետ կապված հարցերի կարգավորման մասին» ԽՍՀՄ 1990 թվականի ապրիլի 3-ի օրենքի տառին համապատասխան: Այսինքն, ըստ էության Կոսովոյի և Բանգլադեշի նախադեպերը լիովին կարող են կիրառելի համարվել նաև այս իրավիճակի համար, որովհետև **անջատումը և անկախության հռչակումը, այնուհետև այդ անկախության պաշտպանումը Արցախի ժողովրդի բնական և անօտարելի իրավունքի իրացումն էր՝ ընդդեմ բիրտ ֆիզիկական ուժի և բնաջնջման քաղաքականության:**

գ) Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման իրավաչափությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև այն հարցին, թե արդյոք Ադրբեջանը կարող ենք դիտարկել որպես պետություն, որը գործում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի

հիման վրա և ունի կառավարություն, որը ներկայացնում է իր տարածքում ապրող ամբողջ ժողովրդին: Որպես հակափաստարկներ՝ կարող ենք վկայակոչել հետևյալը

- Ադրբեջանում իրականացվող հայատյացության պետական քաղաքականությունը գործնականում բացառում է Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը Ադրբեջանի կազմում: Բացարձակապես անընդունելի է Ադրբեջանի պնդումները բազմամշակութային և ժողովրդավարական երկիր լինելու և այլնի վերաբերյալ, երբ «յան» ազգանվան վերջածանց ունեցող անձանց ուղղակիորեն հետ են դարձնում Բաքվի օդանավակայանից, Հայաստանից որևէ ծանրոց և նամակ հնարավոր չէ ուղարկել Ադրբեջան, երբ պետական մակարդակով խեղաթյուրվում է պատմական ճշմարտությունը և ոչնչացվում Ադրբեջանի տարածքում առկա հայկական պատմական ժառանգությունը: Նման պայմաններում Ադրբեջանում այսօր կյանք է մտնում մի սերունդ, ով արմատապես սխալ պատկերացում ունի Արցախի հիմնախնդրի էության, պատճառների, լուծման հեռանկարների վերաբերյալ: Այսինքն, **գործնականում անհնար է դառնում Ադրբեջանի և Արցախի ժողովուրդների ֆիզիկական համապեղելիությունը:**

- Ադրբեջանի կողմից իրականացվող հայատյաց քաղաքականությունը բազմիցս արձանագրվել է ինչպես Ռասայական խտրականության վերացման կոմիտեի զեկույցներում, այնպես էլ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի զեկույցներում: Ադրբեջանի կողմից իրականացվող հայատյաց քաղաքականության գագաթնակետը քնած հայ սպային իր ազգային պատկանելության համար կացնահարած և Հունգարիայի դատարանի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված Ռամիլ Սաֆարաովին Ադրբեջան արտահանձնվելուց հետո ներում շնորհելն ու պետական մակարդակով շոայլ պարզևներ հանձնելն էր: Նման պայմաններում խոսել հայերի հետ հաշտեցման հնարավորությունների, հայերի ինքնավարության և այլնի վերաբերյալ պարզապես ծիծաղելի է:

- Արցախի ժողովրդի պայքարը անկախ պետականության ստեղծման համար կարելի է միջազգային հանրությանը ներկայացնել նաև զուտ որպես ընտրություն արժեքաբանական տեսանկյունից: Ներկայումս միջազգային հարթակներում Ադրբեջանի շարունակական ընկնող վարկանիշը, ժողովրդավարական **իմաստիտուտների ճգնաժամը**, ավտորիտար վարչակարգի հաստատումը, հետապնդումները քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ անհրաժեշտ է ներկայացնել համեմատության մեջ Արցախում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների հարգման, կոնվենցիոն երաշխիքների ապահովման, ՄԻԵԿ espace juridique-ի մեջ միակողմանիորեն ընդգրկվելու պատրաստականության լույսի ներքո, ցույց տալու համար, որ Արցախյան հիմնախնդիրը դադարել է զուտ տարածքային ամբողջականություն-ժողովուրդների ինքնորոշում վեճ լինելուց, այլ պարզապես



պետք է ընտրություն կատարել ժողովրդավարության և ավտոկրատիայի, մարդու իրավունքների և բռնությունների միջև:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ:** Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Մարիա Արայիկի Գրիգորյանի «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրը ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, վերոհիշյալ նկատառումները նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է **ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ պետական կառավարման իրավագիտության ամբիոնի վարիչ,  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

**Թ. Ա. Շաքարյան**

Նիստի քարտուղար՝

**Ա. Հովհաննիսյան**

Ամբիոնի վարիչ Թ. Շաքարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

**Ս. Հ. Պողոսյան**